ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **07.10.2020**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) ղեկավարի կողմից բարձրացված՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին և հաստիքացուցակին ԱԱՏՄ կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից հավանություն տալու վերաբերյալ հարցը Խորհրդի նախագահ Զ. Բաթոյանի առաջարկով որոշվել է իրականացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի հոկտեմբերի 6-ին և ավարտվել 2020 թվականի հոկտեմբերի 7-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց՝

1. Հավանություն տալ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից համաձայնեցված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակին:

3. Հավանություն տալ ՀՀ վարչապետի 2020 թվականի հոկտեմբերի 3-ի N 1121-L որոշման հիման վրա (աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն ստեղծելու և աշխատանքի վերահսկողության վարչությունը աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությանը միացնելու

վերաբերյալ) մշակվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին և դրանից բխող հաստիքացուցակին՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) կողմից համաձայնություն ստանալու դեպքում, ինչպես նաև հետագայում Գրասենյակի համաձայնությամբ, քաղաքացիական ծառայությունը կարգավորող իրավական ակտերից բխող կամ տեխնիկական բնույթի փոփոխությունների հիման վրա մշակվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Զ. Բաթոյան - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Լ. Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Զ. Բաթոյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

2) Լ. Նանուշյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

3) Ա. Ասոյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ (հարցերի վերաբերյալ ներկայացված է առաջարկություն՝ **կցվում է**),

4) Ա. Ավանեսյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

5) Ք. Գրիգորյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

6) Կ. Բրուտյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

7) Շ. Դանիելյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

8) Վ. Պետրոսյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 8 կողմ, 0 դեմ:

Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից համաձայնեցված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակին:

3. Հավանություն տալ ՀՀ վարչապետի 2020 թվականի հոկտեմբերի 3-ի N 1121-Լ որոշման հիման վրա (աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն ստեղծելու և աշխատանքի վերահսկողության վարչությունը աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչությանը միացնելու վերաբերյալ) մշակվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին և դրանից բխող հաստիքացուցակին՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) կողմից համաձայնություն ստանալու դեպքում, ինչպես նաև հետագայում Գրասենյակի համաձայնությամբ,

քաղաքացիական ծառայությունը կարգավորող իրավական ակտերից բխող կամ տեխնիկական բնույթի փոփոխությունների հիման վրա մշակվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

Recoverable Signature

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 Զ. ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ